

7. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱՂՕԹԱԳՐՈՅ (1627)

Հրդեհ Եարասլովի:

«Ամիր աղա ցանկացաւ այս սիրալի դրքիս, որ կոչի Աղօթամատոյց. զի կայ ի սմա ժողովեալ բազում եւ ազգի ազգի աղօթք... անուանի սուրբ հարց Եփրեմի, Յոհանու Ոսկերեանի եւ Յոհաննու Գառնեցոյն եւ այլ սրբոց: Բայց զրեցաւ սա ի դառն ժամանակիս...: Այսմ ամի պիղծ եւ զազիր ազգն Նետողաց, որ են Թաթարք, մըտին յերկիրս Իրախաց եւ զայն ոչ թէ միանգամ, այլ երկիցս եւ երկից եւ այլ յոլովս ի տարօջն եւ աւեր ամին աշխարհիս մերում...:

Եւ մինչ յայսմ նեղութեան եւ վշտի եւ տառապանաց էաք... եկն եհաս բօթ զուժի եւ չար լուր, եթէ մեծ հուր անկաւ ի քաղաքն Եառասլով, ուր էին ժողովեալ բազում վաճառականք յայլ եւ այլ դաւառաց եւ քաղաքաց... այլ եւ կամարակապ զմպէթայարկ վիմաչէն փառաւոր եկեղեցիքն մինչեւ ի ոպառ այրեցեալ փշրեցան, զի բնաւ ոչ մնաց շինութիւն, քանզի չորեք կողմանց էր պատեալ պաշարեալ շուրջանակաւ հուրն, զի եւ մարդիք այրեցան, այլք կիսայրեացք եւ կէսքն մօրվօք եւ հերօք խանձեալք մազապուրծ լեալք փախստականք ի քաղաքէն ի դուրս հաղիւ անկանէին. իսկ ոմանք խելաթիւրեալք եւ մոլեգնեալք վասն մեծի աղետիցն եւ կորստեան ընչիցն, ոմանք զգետտ այրեցեալք մերկ եւ բոկք գլխիրացք սեւադէմ եւ այլակերպք ահարկուք երեւեալ տեսողացն. քան-